Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
15.07.2014թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ 5573
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	19	0.3
դիմում	4404	79.2
բողոք	1145	20.5
կրկնակի	584	10.4
կոլեկտիվ	43	0.4

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 1150

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	879	76.4
բողոք	271	23.5

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	299	5.3
կոմունալ-կենցաղային	3	0.05
շինարարական	41	0.7
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	5	0.08
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	299	5.3
առողջապահության	39	0.6
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1445	25.9
օրենսդրական	15	0.2
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	270	4.8
ապարատային		
այլ հարցեր	3149	56.5
սեփականաշնորհում	8	0.1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2014Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 5573 նամակներից մոտ 0.3%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 20.5%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 79.2%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 25.9%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 4.8%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 5.3%-ը առնչվում է բնակարանային, 0.05%-ը կոմունալ-կենցաղային, 0.7%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 56.5% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 5475-ին տրվել է գրավոր: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 98-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: